ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **05/սեպտեմբերի/2023 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....8..... անդամներ:

Բացակա էին՝ Յ. Հերսևոնյանը, Մ. Հովսեփյանը, Ղ. Խաչատրյանը, Ա. Մնացականյանը, Ա. Հովսեփյանը և Ա. Հովհաննիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Սաթենիկ Կարապետյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վարդան Սարգսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 5-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*՝

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի փոփոխություններ հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 30-ի N 60-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ- 8
դեմ- 0
ձեռնպահ- 0

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 102-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով՝

1. Ջերմուկ համայնքի բյուջեի եկամտային մասի «38-04-00- միջազգային կազմակերպություններ» (h/h - 90036503170) և «37-09-00-այլ ընթացիկ դրամաշնորհներ» (h/h- 900365031120) տնտեսագիտական հոդվածները ավելացնել համապատասխանաբար 5,000,000.0 և 2,560,860 ՀՀ դրամներով (ընդամենը՝ 7,560,860 ՀՀ դրամ):

2. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի՝ բաժին 09, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002-«Նախադպրոցական կրթություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4639- այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 2,560,860.0, բաժին 08, խումբ 02, դաս 06, ծրագիր 51, 210002- «Կինեմատոգրաֆիա» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5511- համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և /կամ/ կապիտալ ակտիվի ձեռք բերում» տնտեսագիտական հոդվածը՝ 5,000,000.0 ՀՀ դրամ գումարներով:

3. Ի գիտություն ընդունել համայնքի բյուջեի գործառնական դասակարգման համապատասխան տնտեսագիտական հոդվածներում կատարված հետևյալ ներքին վերաբաշխումները՝

1) բաժին 06, խումբ 02, դաս 01 , ծրագիր 55, 210002 - «Համայնքների զարգացում » գործառնական նշանակության ծախսերի կատարման «5511-համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և /կամ/ կապիտալ ակտիվի ձեռք բերում» և «4269-հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացվում են 1,095,000.0 ՀՀ դրամ և 250,000.0 հազար ՀՀ դրամներով՝ նվազեցվելով նույն գործառնական դասակարգման «4241-մասնագիտական ծառայություններ » տնտեսագիտական հոդվածը՝ 1,000,000.0 ՀՀ դրամով և բաժին 04, խումբ 07, դաս 03, ծրագիր 51,210002- «Զբոսաշրջության զարգացում» գործառնական նշանակության ծախսերի կատարման «4234-տեղեկատվական ծառայություններ» տնտեսագիտական հոդվածը՝ 345,000.0 ՀՀ դրամով:

4. Սույն որոշման 1-ից 3-րդ կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեն՝ ս/թ օգոստոս 31-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի.

Ընդամենը՝ *Եկամուտների գծով*- 909,243,847.0 ՀՀ դրամ

Ծախսերի գծով- 909,243,847.0 ՀՀ դրամ

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Դեմ - 8
Դեմ - 0
Ձեռնպահ - 0

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 60-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 30-ի «Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին» N 60-Ա որոշման մեջ փոփոխություն. որոշման 1-ին կետում «19» թիվը փոխարինել «26» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Դեմ - 8
Դեմ - 0
Ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	բացակա
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	բացակա
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	բացակա
Գևորգյան Մանան Աղվանի	

Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Սարգսյան

Նիստն արձանագրեց՝ Սաթենիկ Կարապետյանը